

ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համար, Այռեքս, Եր., 2003թ.

2. **Մ. Աստվածատրյան, Ա. Արմաուդյան, Ի. Օհանովա**, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործում, Այռեքս, Եր., 2003թ.

3. **Մ. Աստվածատրյան, Ռ. Պետրոսյան, Լ. Երեմյան**, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Այռեքս, Եր., 2001թ.

4. **Ս. Վարդումյան, Ա. Սարգսյան, Լ. Ստրուցենկո**, Գործիմաց մոտեցում. տեսություն և պրակտիկա, Այռեքս, Եր., 2004թ.

5. Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Նոյան Տապան, Եր., 2005թ.

6. **Յու. Ամիրջանյան**, Մանկավարժություն, Եր., 2005թ.

ПРОФЕССИОНАЛЬНЫЙ ПОДХОД КАК ОСНОВНОЙ ПУТЬ К ОБРАЗОВАТЕЛЬНОЙ РЕФОРМЕ

А. С. САФАРЯН

В работе представлена компетенции сущность отношения и условия их реализации в современной образовательной системе.

Автор отмечает важность и роль гуманизации, индивидуализации, коммуникации в системе образования.

THE EFFICIENT APPROACH AS THE MAIN WAY OF PEDAGOGICAL EDUCATIONAL IMPROVEMENT

A. S. SAFARYAN

The essence of efficient approach and the conditions of realization in modern educational system are represented in the article. The author emphasizes the role of humanistic education, individualization and communication in the efficient educational system.

ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԻՄԱՑԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գ. Կ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Խ. Աթուլյանի անվան ՀԱՊՄՀ դասախոս

Մանկավարժական գիտահետազոտական աշխատանքների և գիտական գործունեության իրականացման ոլորտում նորարարական կրթական ծրագրերի աջակցման և իրականացման կազմակերպամեթոդական, գիտահետազոտական համակարգի ապահովման պատասխանատվությունն ընկած է մանկավարժական կրթություն ապահովող բուհերի վրա, որոնք էլ պետք է հանդես գան որպես

մանկավարժական հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների իրականացման սուբյեկտներ:

Միայն մանկավարժական գիտահետազոտական գործունեության կազմակերպման արդյունքում հնարավոր կլինի ձևավորել կրթական բարեփոխումների արդյունավետության պայմաններ, որոնք կնվազեցնեն ռիսկերն ու խոչընդոտները այդ գործընթացում:

Բուհերում մանկավարժական գիտահետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- գիտահետազոտական գործունեության հարմարավետ միջավայրի ստեղծում, գիտական, ուսումնական և դաստիարակչական գործընթացների միասնության ապահովում,

- հիմնական գիտական ուղղությունների և գիտական դպրոցների մշակում և զարգացում,

- հիմնական գիտական դպրոցների և ուղղությունների հետազոտական աշխատանքների ռեսուրսների համակենտրոնացում,

- գիտական հետազոտության ոլորտում ընդհանուր ուսումնական ծրագրերի և նախագծերի ստեղծում,

- գիտական ներուժի համախմբում՝ կոլեկտիվ հիմնարար գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով,

- գիտական և գիտահետազոտական գործունեության, ինչպես նաև գիտական նվաճումներին վերաբերող տվյալների բազայի փաստագրում և պահպանում՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով,

- գիտական հետազոտությունների բնագավառում ուսումնառողների ընդհանուր մշակութային և մասնագիտական գործիմացության բաղադրիչների ձևավորում,

- այլ միջոցների ներգրավմամբ դասախոսների, գիտաշխատողների, ասպիրանտների և ուսանողների գիտական հետազոտությունների աջակցության կազմակերպում,

- օտարերկրյա գործընկերների հետ համատեղ հետազոտական նախագծերի ստեղծում ու գիտական փորձի փոխանակում:

Այս համատեքստում պետք է կազմակերպվի նաև դասախոսների մասնագիտական զարգացման համակարգերի կատարելագործումը: Հոդվածի շրջանակներում կփորձենք հիմնավորել այս ոլորտում նորարարական մոտեցումների էությունն ու դրանց իրականացման ուղիները, որը կարող է օգտակար լինել բուհերում դասավանդողների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման գործընթացները կազմակերպելիս: Դրա արդյունավետությունը կնեծանա, եթե յուրաքանչյուր դասախոս ունենա բուհի զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական դրույթներին համապատասխան իր գործունեությունն ու անհատական զարգացումը ծրագրելու և իրականացնելու կարողություններ, որոնց շարքում պետք է առանձնացնենք համակարգային մտածողությունը, որը թույլ է տալիս պատրաստականորեն ընդառաջ գնալ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, նորարարություններին, ընկալել դրանց նշանակությունն ու կարևորությունը: Այսինքն, դասախոսի զարգացման ռազմավարական ծրագիրը նախատեսում է համապատասխան գործիմացու-

թյունների զարգացում, դրանց դերի ու տեղի կարևորում մասնագիտական գործիմացությունների համակարգում:

Քանի որ բուհերում դասախոսի աշխատանքը բնութագրվում է որպես գիտամանկավարժական գործունեություն, իսկ դրա արդյունավետ իրականացումը ենթադրում է և՛ մասնագիտական, և՛ անձնային համապատասխան որակներ, գործիմացություններ՝ գիտության տվյալ բնագավառին տիրապետում, գիտելիքների հարուստ բազա, մանկավարժական վարպետություն, էթիկա, ուսուցման և դաստիարակության գործընթացների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական կարողություններ, հմտություններ, անձնային որակներ, դրական աշխարհայացք, մանկավարժական նորարարական գործընթացների նկատմամբ ընկալունակություն, որը բխում է տվյալ ոլորտի աշխատանքի բնույթից. «բարձրագույն դպրոցում ուսուցումը մարդու, մտածողության, նրա հոգեկան գործունեության բարձրագույն ձևերի ստեղծմանն ուղղված աշխատանք է»¹:

Դասախոսի աշխատանքը նպատակաուղղված է ոչ միայն ուսանողներին կոնկրետ գիտության հիմունքների ծանոթացմանը, այլ նաև նրանց մասնագիտական ինքնաիրացման, ինքնադրսևորման համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների, պատրաստականության ձևավորմանն ու զարգացմանը:

Բուհերի դասախոսների շրջանում դեռևս լայնորեն տարածված են ավանդական մոտեցումները, որոնք ձևավորվել ու պահպանվել են խորհրդային շրջանից: Այս ոլորտում իրականացվող հետազոտությունները փաստում են, որ առկա են որոշակի խնդիրներ.

- շատ դասախոսներ իրենց մանկավարժական գործունեությունն ուղղում են զուտ ուսումնական առարկայի նպատակի իրագործմանը, նախապատվություն են տալիս ձևավորող ուսուցմանը, սուբյեկտ-օբյեկտային՝ այսինքն միակողմանի բնույթ կրող, միանձնյա ղեկավարվող մանկավարժական գործունեությանը,

- բուհերի որոշ դասախոսներ չեն կարողանում հրաժարվել մանկավարժական գործունեության ընթացքում առանձին խնդիրների, գործառույթների իրագործումից և անցնել դրանց համակարգային իրագործմանը,

- դասախոսների մոտ նկատվում են գործնական կարողությունների պակաս, ստեղծագործական-որոնողական աշխատանքների կարողությունների բացակայություն, միայն տեսական, գործնականորեն ոչ արդյունավետ գիտելիքներին գերակայություն տալու ձգտում,

- շատ դասախոսներ կենտրոնացնում են միայն առարկայական գիտելիքների հաղորդման, առարկայական ծրագրի իրագործման վրա, սակայն անտեսում են դաստիարակչական աշխատանքները ուսանողների հետ, նրանց դրական, հասարակության համար ցանկալի անձնային որակների, հատկանիշների, ինչպես նաև, ստեղծագործական, գիտահետազոտական աշխատանքների կատարման կարողությունների, հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը,

- որոշ դասախոսների մոտ բացակայում է նաև մանկավարժական գործունեության հետազոտական կողմի ընկալումն ու իմաստավորումը:

¹ *Бусыгина А. Л.*, Профессор-профессия: теория проектирования содержания образования преподавателя вуза. Самара, 2003, стр. 168.

Նշված խնդիրների լուծման, դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել բուհի դասախոսների մասնագիտական զարգացման գործառնելի, արդյունավետ ուղիներ: Հատկապես այդ ուղիների և միջոցների մշակումն ու զարգացումը կարևորվում է լրացուցիչ կամ շարունակական կրթության համակարգում: Վերջինիս հիմնական նպատակը դասախոսների տեսական ու գիտական պատրաստվածության, մանկավարժական պրակտիկ փորձի, գործնական կարողությունների ներդաշնակ զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է, այդ համահունչ զարգացման ապահովումը, նրանց անձնային մասնագիտական զարգացման ներքին դրդապատճառների առաջացումը, մեխանիզմների մշակումն ու կատարելագործումը: Նշված հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ են կատարել Վ. Ա. Սլաստենինը, Վ. Է. Տամարինը, Գ. Վ. Լավրենտևը, Ն. Բ. Լավրենտևան, Կ. Մ. Լևիտանը, Ա. Կ. Մարկովը և այլք: Նրանց կարծիքով, բուհում դասավանդողի անձնային-մասնագիտական զարգացումը ենթադրում է ոչ միայն մասնագիտական որակների աճ, այլ նաև համապատասխան որակների դրսևորումներ կենսագործունեության բոլոր ոլորտներում, ինքնաիրացման, ինքնադրսևորման պահանջմունքների ու հնարավորությունների առավելագույն բավարարում և ներդրում, սեփական սուբյեկտիվ փորձի ձևավորում: «Մասնագիտական զարգացումը դիտվում է որպես մարդու հոգեկանում պրոֆեսիոնալ նոր որակների առաջացում, որպես մարդու կողմից նոր մասնագիտական կարևոր որակներին տիրապետում, որպես մասնագիտորեն կարևոր որակների նախօրոք ձևավորված հարաբերակցության փոփոխություն»²:

Անձի մասնագիտական և անձնային որակների զարգացումը փոխկապված են և փոխլրացնում են: Ա. Ա. Դերկաչի կարծիքով՝

- զարգացումը պետք է ընկալել որպես կատարելագործում, շարժում դեպի հասունություն, դեպի զարգացման նպատակահարմար մակարդակ,
- զարգացումն ունի սուբյեկտիվ բնույթ,
- զարգացումն իրագործվում է սուբյեկտի կողմից հակասությունների լուծման միջոցով,
- զարգացումը դիտվում է որպես կյանքի ուղու և գործունեության զարգացում,
- ակնելուզիան հաշվի է առնում անձի զարգացման պոտենցիալ և ակտուալ վիճակները և կոչված է բացահայտելու նրա թաքնված, չիրացված հնարավորությունները³:

Շատ կարևոր է, որ ժամանակակից դասախոսներն իրենց մանկավարժական գործունեության մեջ կարողանան զուգակցել տեսական և գործնական մտածողությունը, գիտելիքների, կարողությունների կատարելագործումը, մանկավարժական նոր գաղափարների, հարացույցների, մանկավարժական տեսությունների ուսումնասիրումը, վերլուծությունն ու յուրացումը, մանկավարժական-մասնագիտական նոր, պահանջվող մտածողության և գործունեության ոճի ձևավորումը:

² *Маркова А. К.*, Психология профессионала. М., 1996, стр. 215.

³ *Деркач А. А.*, Акмеология: личностное и профессиональное развитие человека: Методолого-прикладные основы акмеологических исследований. М., 2000, стр. 107.

Ե. Ի. Իսակի, Վ. Ի. Սլոբոդչիկովի կարծիքով, որպես դասախոսի մասնագիտական գիտակցության կազմավորման ձև պետք է ընդունել «ռեֆլեքսիվ-մտածական մշակույթը»: Բուհի դասավանդողի մասնագիտական գործունեության անհատական ոճային բնույթի կարևորագույն բաղադրիչ է ինքնավերլուծությունը:

Գերմանիայի փորձի հիման վրա՝ ընդունված է առանձնացնել դասախոսների գործիմացության մի շարք ընդհանուր բաղադրիչներ⁴: Այսպես. գործունեության գործիմացական բաղադրիչը (Handlungskompetenz) ամփոփում է առարկայական գիտելիքների և ձեռքբերված հմտությունների հիման վրա խնդիրների լուծման և գնահատման ընդունակությունները՝ առաջադրված նպատակին հասնելու գործընթացում:

Ընդհանուր ստեղծագործական (Sachkompetenz) գործիմացությունները, գիտելիքների առկայությունը, մտածելու և որոշումներ կայացնելու ընդունակությունը նախապայման են առարկայական գործիմացության բաղադրիչների (Fachkompetenz) զարգացման համար: Դրանք ներառում են ճանաչողական և գործառնության գործիմացությունները:

Անձնային գործիմացություններն (Personalkompetenz) ամբողջացնում են ընթերցելու, վերլուծելու և զարգացման հնարավոր ուղիները գնահատելու, անձի ինքնահիշատակի ընդունակությունները, որոնք կրեն սոցիալապես ընդունելի բնույթ ու չեն վնասի հասարակության այլ անդամներին, սեփական հնարավորությունները անընդհատ զարգացնելու և ինքնակատարելագործման ձգտումը: Դրանք ամփոփում են անձի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ անկախությունը, քննադատական կարողությունը, ինքնավստահությունը, վստահելիությունը, պատասխանատվությունը, պարտքի զգացումը և մի շարք այլ մասնագիտական և բարոյական որակներ: Այսպիսով դրանք ամբողջացնում են ստեղծագործական և սոցիալական գործիմացությունները:

Որոշ դեպքերում «ինքնագործիմացությունը» ներառում է բարոյական և անկախ գործելու կարողությունները, որը ենթադրում է դրական ԵՍ-ի պաշտպանում ու բարոյականության զարգացում: Սոցիալական գործիմացությունները (Sozialkompetenz) նկարագրում են հարաբերությունների ձևավորման և պահպանման պատրաստվածությունը, ճանաչել ու հասկանալ հարաբերություններում հնարավոր շահերն ու վտանգները, ինչպես նաև, փոխհամագործակցելու այլոց հետ ազնիվ ու բնական միջոցներով՝ ներառյալ սոցիալական պատասխանատվությունն ու համերաշխությունը: Այսպիսով. դրանք ամբողջացնում են գործառնության և սոցիալական բաղադրիչները:

Յու. Ա. Լոբեյկոյի ժամանակակից դասախոսի հոգեբանամանկավարժական բնութագիրը և համապատասխան մասնագիտական մակարդակները ընդհանրական տեսքով ներկայացված է աղյուսակ 1-ում⁵: Այստեղ նշված ցուցանիշներից բացի դասախոսի պրոֆեսիոնալիզմը կարող են չափել նաև այլ չափանիշներով, հատկապես մանկավարժական գործունեության ընթացքով և արդյունավետությամբ: Դրանցից են՝ ուսուցման գործընթացի կազմակերպման նորարա-

⁴ Delamare Le Deist, F. Que's que c'e competence/F. Delamare Le Deist, J. Winterton//Human Resource Development International. 2005. March. Vol. 8, No. 1. PP. 27–46.

⁵ *Лобейко Ю. А.*, Психолого-педагогические основы работы преподавателя вуза. М., Народное образование, Ставрополь, Сервисшкола, 2007, стр. 76.

րությունների նկատմամբ նրանց պատրաստականությունը, մասնագիտական աճի, գիտելիքների, կարողությունների կատարելագործման ձգտումն ու դրդապատճառների առկայությունը:

Այսօր դասախոսների վերապատրաստման նորագույն տեխնոլոգիաների մշակման գործընթացում կարելի է հենվել առաջատար փորձի վրա: Օրինակ, այս ոլորտում լայնորեն տարածված և արդյունավետ կիրառություն է ստացել պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան: Վերապատրաստվող դասախոսների համար ստեղծվում են պրոբլեմային, երբեմն նաև անորոշ իրադրություններ, որոնց լուծումները կամ բացահայտումները պետք է կատարվեն՝ վերլուծելով, քննարկելով, համադրելով, դասակարգելով, վեր հանելով առկա խոչընդոտները, հակասությունները, կատարելով կոնկրետ հարցադրումներ: Այդ նպատակով ուսումնական նյութը ներկայացվում է ոչ ուղղակի, ոչ պարզ ձևով, այն մատուցվում է այնպես, որպեսզի ունկնդիրները կարողանան քննարկել ներկայացված տեղեկատվությունը, վեր հանել դրանում առկա հակասություններն ու ինքնուրույն հասնեն խնդրի լուծմանը: Այդ նպատակով մատուցվող ուսումնական նյութը ունկնդիրներին ներկայացվում է որպես ոչ ավարտուն ամբողջական տեսքով խնդիր, ինչպես նաև, երևույթի վերաբերյալ տարբեր հեղինակների, մասնագետների հակասական հայացքները: Պրոբլեմային իրադրության ստեղծման գործում կարևոր դերը վերապահված է վերապատրաստվող դասախոսին, նրա պրոֆեսիոնալիզմին:

Վերապատրաստումների ընթացքում կարևորվում է ուսուցման գործընթացում երկխոսության կազմակերպումը, համագործակցային մթնոլորտի ձևավորումը: Այս մարտավարության առավելությունն այն է, որ երկխոսող կողմերից յուրաքանչյուրը և՛ ինքնուրույն սուբյեկտ է, և՛ հավասար մեկը մյուսին, և՛ միմյանցից փոխկախվածության մեջ գտնվող, և՛ մեկը մյուսի համար զարգացման խթան:

Այստեղ նշենք ևս մեկ կարևոր պահ. այդ գործընթացն ապահովում է նաև հետադարձ արդյունք, քանի որ վերապատրաստող դասախոսի մոտ այդ շփումը բերում է անձնային որակների, գործնական կարողությունների զարգացման, հանգվածության, վստահության սեփական մասնագիտական մանկավարժական կարողությունների ամրության վրա, նոր գաղափարների, հայացքների ձևավորման:

Մանկավարժական մասնագիտական զարգացմանը նպաստում են նաև վերապատրաստման դասընթացներից հետո վերապատրաստվող դասախոսների կողմից ինքնուրույն գործնական հանձնարարությունների կատարումը, քանի որ դրանցում նրանք դրսևորում են նոր դիրքորոշումներ, մանկավարժական նոր մոտեցումներ, կիրառում են նոր մեթոդներ, մանկավարժական տեխնոլոգիաներ: Հետաքրքիր է, որ իրենց գործնական հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծությունից, գնահատումից հետո վերապատրաստվող դասախոսներն ունենում են ինքնաբավարարվածության, ինքնահաստատման, մասնագիտական մանկավարժական աճի զգացումներ:

Բուհի դասախոսների վերապատրաստման գործընթացում ուսուցման բովանդակությունը կառուցելիս պետք է հաշվի է առնվի դասախոսների անձնական մասնագիտական փորձը՝ մասնագիտական գիտելիքների, մանկավարժա-

կան կարողությունների և հմտությունների, մասնագիտական գործունեության ընթացքում դրանց տրվող գնահատականների, առաջացող տպավորությունների, հույզերի և զգացմունքների ամբողջությունը, մասնագիտական գործունեության ոճը, գիտական հետազոտությունների ոլորտը, ձեռքբերումները, անհատական հոգեբանական առանձնահատկությունները: Վերապատրաստվող դասախոսները կաշկանդված չեն անպայմանորեն այդ փորձն ընդգրկել ուսուցման բովանդակության մեջ, քանի որ այն կարող է տարբեր պատճառներով վտանգել ուսուցման գործընթացի արդյունավետությունը: Այդպիսի պատճառներ կարող են լինել պատրաստվող դասախոսների մտածողության, դիրքորոշումների, փորձի ոչ ճկուն, քարացած լինելը, կարծրատիպային բնույթը: Վերապատրաստումների, մասնագիտական զարգացման նպատակներից մեկը նմանատիպ փորձի շտկումն է, վերափոխումը կամ վերաիմաստավորումը: Այդ նպատակի ձեռքբերումն իրականացվում է մի շարք խնդիրների լուծման արդյունքում՝ մասնագիտական ռեֆլեքսիայի ձևավորում, մտածողության համապատասխանեցում մանկավարժական նպատակներին, տարբեր երևույթների, փաստերի, իրադրությունների ընկալում և բնութագրում՝ մանկավարժական մտածողության և գործունեության դիրքերից, դրական վերաբերմունքի ձևավորում մանկավարժական նորարարությունների նկատմամբ, սեփական մասնագիտական կարողությունների, հնարավորությունների համապատասխան գնահատում:

Վերապատրաստումները նպաստում են վերապատրաստվողների անձնային, մասնագիտական փորձի զարգացմանը, վերաիմաստավորում նրանց անցյալի փորձը, մանկավարժական իրավիճակների ընկալումը այլ տեսանկյունից, ձևավորում նոր, թարմ դրդապատճառներ, նորովի մոտեցում մասնագիտական գործունեության նկատմամբ: Վերապատրաստվող դասախոսների մոտ ստեղծված իրավիճակում փոխվում են արդիականություն, նպատակ, խնդիրներ, բովանդակություն, ստեղծագործականություն, զարգացում հասկացությունների ընկալումները, իմաստները: Ստացված նոր, ինչպես նաև նախկինում ունեցած գիտելիքները նրանք սկսում են նորովի ընկալել, կիրառել գործնականում, դրականորեն է փոխվում դրանց կիրառման մասշտաբայնությունը, ոլորտները: Այս ամենը գումարվելով, հանգեցնում են դասախոսների մանկավարժական գործունեության նոր որակների ձևավորմանը և հնարավորություն ստեղծում հետագա զարգացման համար: Նրանք գիտակցում են իրենց բացթողումները, թերությունները, առանձին բաղադրիչների հնացած լինելը, դրանք նորացնելու անհրաժեշտությունը, իրենց գործունեության մեջ կադապարներից ու կարծրատիպերից հրաժարվելու, նոր, թարմ գաղափարներով, ստեղծագործական մոտեցումներով առաջնորդվելու անհրաժեշտությունը, քանի որ հակառակ դեպքում կոժվարանա նրանց սոցիալ-հոգեբանական հարմարումը բարձրագույն կրթության համակարգում նոր իրողություններին, բարեփոխումների պահանջներին:

Ինչպես յուրևաքանչյուր գործունեություն, այնպես էլ բուհում մասնագիտական կատարելագործման ծրագրերը կազմվում և իրականացվում են որոշակի սկզբունքների հիման վրա: Դրանք են.

● **միջառարկայական կապերի ձևավորման և փոխներառման սկզբունքը** ենթադրում է կրթական ծրագրում տարբեր ոլորտների դասընթացների և ուսումնական նյութերի միջև տրամաբանական կապի ձևավորում ու ներառում,

- **շարժունության սկզբունքը** հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում վերանայել, շտկել, լրացնել կրթական ծրագրերի բովանդակությունը,

- **մարդասիրական սկզբունքը** պահանջում է նույնիսկ տեխնիկական և բնագիտական մասնագիտություններ ունեցող դասախոսներին զինվել հումանիտար գիտությունների գիտելիքներով,

- **շերտավորման սկզբունքը** ենթադրում է կրթական ծրագրի բովանդակությունը համապատասխանեցնել վերապատրաստվող մասնագետ-դասախոսների որակավորման աստիճանին, գիտելիքներին, հետաքրքրություններին, բուհի առանձնահատկություններին, խնդիրներին, որտեղ աշխատում են վերապատրաստվող դասախոսները,

- **գիտակցված հեռանկարների կառուցման** սկզբունքը ենթադրում է վերապատրաստման գործընթացի և՛ օբյեկտների, և՛ սուբյեկտների կողմից մասնագիտական կատարելագործման գործընթացի ընթացիկ և հեռահար նպատակների ընկալում, գիտակցում,

- **մանկավարժական խորհրդատվության բազմակողմանիության սկզբունքի** իրագործումը հիմնականում պայմանավորված է վերապատրաստվող դասախոսների հետաքրքրվածության և վերապատրաստվողների գործիմացության բարձր մակարդակով,

- **համագործակցության սկզբունքը** հիմնվում է վերապատրաստվողների և վերապատրաստողների երկկողմանի, փոխադարձ ակտիվության վրա,

- **գիտականության սկզբունքը** ենթադրում է կոնկրետ մասնագիտության ուղղությամբ գիտական նորություններին, ձեռքբերումներին մասնագիտական կատարելագործման համակարգի համապատասխանություն:

Այս սկզբունքների հիմքում ընկած է Բ. Ամանկի այն գաղափարը, որ «Նոր գիտելիքների և կարողությունների, աշխարհում կողմնորոշման նոր միջոցների անընդհատ կուտակումը բերում է մարդու նոր հնարավորությունների, նոր հոգեբանական կարողությունների առաջացման: ...Դրանով իսկ ձևավորվում է նոր, ոչ սովորական, դժվար իրադրությունների որոնման մեխանիզմ»⁶:

Դասախոսների վերապատրաստումը ենթադրում է մասնագիտական գործունեության շրջանակներում բազմակողմանի և բազմաբնույթ գիտելիքների, տեղեկատվության ձեռքբերում, ինչպես նաև համապատասխան հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակի բարձրացում: Այս ամենը բնականաբար հանգեցնում են դասախոսի մասնագիտական գործունեության բովանդակության և բնույթի, նրա իրականացման տեխնոլոգիաների, գործիմացությունների փոփոխության: Ժամանակակից բարձրագույն կրթության համակարգը պահանջում է դասախոսից և՛ կայուն, և՛ միաժամանակ փոփոխվող, ճկուն, զարգացող գործիմացություններ, ինչը կապահովի նրա արդյունավետ գործառնելիությունը բուհական համակարգում ընթացող բարեփոխումների, նորարարությունների ներդրման պայմաններում, կիսբանի նրա ինքնակատարելագործմանը և որակավորման բարձրացման անընդհատ ձգտմանը: Դասախոսն այս դեպքում պատրաստական կլինի ընդամաք գնալ բարձրագույն կրթության

⁶ **Ананьев Б. Г.**, Человек как предмет познания. Л., 1969, стр. 56.

համակարգում ներդրվող նորարարական կրթական ծրագրերին և անընդհատ զարգացնել մասնագիտական գործիմացությունները:

Ամփոփելով, գալիս ենք այն եզրահանգման, որ լրացուցիչ շարունակական կրթությունը նպաստում է բուհի դասախոսների մասնագիտական և անձնային որակների զարգացմանը, ստեղծագործական գործունեության, ինքնազարգացման մեխանիզմների ակտիվացմանն ու նախաձեռնողականության խթանմանը: Դրա շնորհիվ կարող է բարձրանալ ուսանողների մասնագիտական կրթության որակն ու բուհի մրցունակության մակարդակը:

Աղյուսակ 1

ԴԱՍԱԽՈՍԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

h/h	Առավելագույն մակարդակ (5 միավոր)	Թույլատրելի մակարդակ (4 միավոր)	ճգնաժամային մակարդակ (3 միավոր)
1. Անձի հոգեբանական հատկանիշները			
1	Նյարդային համակարգի ուժեղ հավասարակշռված տիպ	Նյարդային համակարգի ուժեղ ոչ հավասարակշռված տիպ	Նյարդային համակարգի թույլ, իներտ տիպ
2	Լիդերության միտում	Իշխելու ձգտում, կարողություններ	Դեսպոտիզմ
3	Վստահություն իր անձի նկատմամբ	Ինքնավստահություն	Ինքնասիրահարվածություն
4	Պահանջկոտություն	Անհանդուրժողականություն	Դաժանություն
5	Բարեսրտություն և չփվողականություն	Ոչ բավարար ինքնուրույնություն	Ծայրահեղ կոնֆորմիզմ
2. Դասախոսը միջանձնային հարաբերությունների կառուցվածքում			
6	Հաղորդակցման դեմոկրատական ոճին տիրապետում	Հաղորդակցման ավտորիտար ոճին տիրապետում	Հաղորդակցման լիբերալ ոճին տիրապետում
7	Գործընկերների հետ համագործակցության ձգտում	Գործընկերների հետ մրցակցության ձգտում	Մշտական ընտելացում և փոխդիջումներ
8	Նորմալ ինքնագնահատական	Ցածրացած ինքնագնահատական	Բարձրացված ինքնագնահատական
9	Կոլեկտիվում մեկուսացվածության մակարդակը	Մեկուսացվածության մակարդակ 10%-ի սահմաններում	Կոլեկտիվում մեկուսացվածության մակարդակը 10%-ից ավելի
3. Դասախոսի անձի մասնագիտական որակները			
10	Լայն մտահորիզոն և նյութի ազատ շարադրում	Միայն իր առարկայի իմացություն	Աշխատանք միայն համառոտագրերով
11	Ուսանողի հոգեբանական տարիքային առանձնահատկությունների հաշվառման կարողություն	Սովորողների տարիքային և մանկավարժական հոգեբանության իմացություն	Կարիքային և մանկավարժական հոգեբանության զիտելիքների քաջակայություն
12	Հատուկ արտասանություն, ընդհանուր և յուրահատուկ զրգափտություն	«Խուլ ձայն» առանձին բառակապակցություններ հետևողական ուղղումներով	Անհասկանալի խոսք
13	Էլեգանտ արտաքին տեսք, արտահայտիչ դիմախառ և ժեստեր	Խտանդարտ արտաքին տեսք, դիմախառի և ժեստերի քաջակայություն	Ընչ խնամված արտաքին, չափազանցված ժեստիկուլյացիա, ոչ աղեկվատ դիմախառ
14	Սովորողներին դիմում է անունով	Սովորողներին դիմում է ազգանունով	Սովորողներին մշտապես դիմում է անունով

15	Իրադրության նկատմամբ ակնթարթային հակազդում, հնարամտություն	Ավելի դանդաղեցված հակազդում և հնարամտություն	Հնարամտության բացակայություն
16	Բոլոր ուսանողների ուսումնական աշխատանքի միաժամանակյա կազմակերպման կարողություն	Ուսանողների մեծ մասի աշխատանքը կազմակերպելու կարողություն	Աշխատանք միայն առանձին ուսանողների հետ՝ մեծամասնության պասիվության պարագայում
17	Ստուգում է ուսումնական նյութի հասկացման, ընկալման մակարդակը	Ստուգում է հասկացման մակարդակը պարբերաբար	Երբեք չի ստուգում նյութի ընկալման մակարդակը բացատրության ընթացքում
4. Մասնագիտական գործունեության արդյունավետությունը			
18	Ուսումնական պարապմունքների 85% և ավելի արդյունավետություն	Ուսումնական պարապմունքների 65-84% արդյունավետություն	Ուսումնական պարապմունքների 45-64% արդյունավետություն
19	Աշխատանք պահանջների բարձր մակարդակով	Աշխատանք պահանջների միջին մակարդակով	Աշխատանք պահանջների ցածր մակարդակով
20	Ուսուցանվածության փաստացի մակարդակը 64-100%	Ուսուցանվածության փաստացի մակարդակը 36-63%	Ուսուցանվածության փաստացի մակարդակը 36%-ից ցածր
max	100 միավոր	80 միավոր	60 միավոր

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ананьев Б. Г.**, Человек как предмет познания. Л., 1969
2. **Бусыгина А. Л.**, Профессор-профессия: теория проектирования содержания образования преподавателя вуза. Самара, 2003
3. **Деркач А. А.**, Акмеология: личностное и профессиональное развитие человека: Методолого-прикладные основы акмеологических исследований. М., 2000
4. **Ловейко Ю. А.**, Психолого-педагогические основы работы преподавателя вуза. М., Народное образование, Ставрополь, Сервисшкола, 2007
5. **Маркова А. К.**, Психология профессионала. М., 1996
6. Delamare Le Deist, F. Que's que c'e competence/F. Delamare Le Deist, J. Winterton//Human Resource Development International. 2005. March. Vol. 8, No. 1. PP. 27-46

ОРГАНИЗАЦИЯ КОМПЕТЕНТНОСТНОГО ПОДХОДА В ПРОФЕССИОНАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКОЙ ПОДГОТОВКЕ И ПЕРЕПОДГОТОВКЕ ЛЕКТОРОВ

Г. К. КИРАКОСЯН

В статье рассмотрены проблемы оценки качества результатов обучения при подготовке и переподготовке преподавателей вузов в контексте компетентностного подхода. Раскрыты основные подходы к разработке измерителей. Классификация компетентностей может использоваться при подготовке и переподготовке кадров по широкому кругу специалистов, преподавателей вузов, а также при повышении квалификации и переподготовке кадров образования. Представляет интерес для исследователей и специалистов управления педагогическим персоналом вузов и кадров образования.

THE ORGANIZATION OF THE COMPETENT APPROACH IN PROFESSIONAL-PEDAGOGICAL PREPARATION AND RETRAINING OF LECTURERS

G. K. KIRAKOSYAN

In this article the problems of an assessment of quality of results of training are considered during the preparation and retraining of teachers of higher educational institutions in a context of a competent approach. The main approaches to development of measuring instruments are discovered. Classification of competents can be used by preparation and retraining of personnel on a wide range of experts, teachers of higher educational institutions, and also professional development and education retrainings of personnel. It makes interest for researchers and specialists of management of the pedagogical personnel of higher educational institutions and shots of education.

SUGGESTIONS FOR EFL TEACHERS IN TEACHING SPEAKING

N. BLUASHVILI

Ph.D Associate- professor i.Gogebashvili Telavi state university

English remains an often confusing and difficult language to learn for many reasons. The common “gap” between how a word is spelled and how it sounds is one challenge. Another source of confusion and many headaches remains the surprisingly large number of homonyms and homophones, different words with the same sound. Of course, English language learners make mistakes all the time. While we might seldom confuse “by” the bank for “buy” the bank, it’s easy to confuse “realize” for “real lies”. Sometimes our students complain, or whine, about our how confusing English is for them to master. And if they “eat” their final syllables like “s” or “r”, even attentive listeners can find themselves confused too. Did the ESL student mean “mine”, “mines”, “mind”, or “miner”? We must, therefore, continue to emphasize the importance of word endings – even in EFL classes – so listeners can better understand what our students want to say. If the context is unclear or vague, we might not know if the speaker is referring to a miner or minor problem? English teachers can turn these common good mistakes into teachable moments and practical lessons in speaking skills. Yet we have to admit English is a crazy language. Many language learners regard speaking ability as the measure of knowing a language. These learners define fluency as the ability to converse with others, much more than the ability to read, write, or comprehend oral language. They regard speaking as the most important skill they can acquire, and they assess their progress in terms of their accomplishments in spoken communication.

Key words: involves, context is unclear or vague, acquire, recognize, emphasizing certain words

Language learners need to recognize that speaking involves three areas of knowledge: